ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը՝**

Աննա Իվանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Պորտուգալիայի Հանրապետություն, քաղաք Լիսաբոն, 2025 թվականի նոյեմբերի 3-ից նոյեմբերի 7-ը և Իտալիայի Հանրապետություն, քաղաք Հռոմ, 2025 թվականի նոյեմբերի 8-ից նոյեմբերի 14-ը

4. **Հրավիրող կողմը.**

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Ուսումնասիրել Պորտուգալիայի և Իտալիայի Հանրապետություններում սոցիալ-տնտեսական ինտեգրման քաղաքականություններն ու փորձը՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող պետական և համայնքային սոցիալական աջակցության ծրագրերը կատարելագործելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները.**

6.1 Ապաստան հայցող և փախստական ճանաչված անձանց, նաև աշխատանքային միգրանտներին մատուցվող հիմնական սոցիալական ծառայությունները
6.2 Նշված թիրախ խմբի հետ իրականացվող գործնական (պրակտիկ) սոցիալական աշխատանքը
6.3 Պետության և համայնքի դերակատարությունը թիրախ խմբին սոցիալական ծառայությունները մատուցելիս
6.4 Թիրախ խմբին ծառայությունների մատուցումը տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից

6.5 Համայնքում ժամանակավոր կացարանում սոցիալական բնակարաններում մատուցվող ծառայությունները

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

7.1 «Ինտեգրման, միգրացիայի և ապաստանի գործակալություն»-ը ներկայացրեց իր կառուցվածքը, թիրախ խմբին ինտեգրելու համար իրականացվող գործառույթները, վերջիններիս անձը հաստատող փաստաթուղթ է տրամադրում, կացության իրավունք է տրամադրում, իրականացնում է սոցիալ-տնտեսական ինտեգրում երկարաժամկետ կտրվածքով

7.2 «Փախստականների համար հիսուսյան ծառայություն»-ը ներկայացրեց միգրանտներին և փախստականների համար իրականացվող սոցիալական ծառայությունները, համագործակցությունը պետական և համայնքային կառույցների հետ, նշվեց նաև աշխատանքն անօթևան միգրանտների հետ

7.3 «Պորտուգալիայի փախստականների խորհուրդ» կազմակերպությունը ներկայացրեց ապաստան հայցող անձանց տրամադրվող հիմանական սոցիալական ծառայությունները, նշեց իր գործունեության լիազորությունների շրջանակը և աշխատանքը այլ կառույցների հետ

7.4 Կաշկայշի համայնքապետարանում ներկայացվեցին թիրախ խմբի հետ իրականցվող աշխատանքերը, վերջիններիս տրամադրվող ծառայությունները, այցելություն կատարվեց Կաշկայշ համայնքի սոցիալական բնակարան, տեղում ներկայացվեցին շահառուների համար իրականացվող սոցիալական միջոցառումները

7.5 Կաշկայշ համայնքի միգրանտների տեղական աջակցող կենտրոնում ներկայացվեց կառույցի կառուցվածքը և նպատակը, մատուցվող ծառայությունները և համագործակցությունն այլ կառույցների հետ

7.6 «Սուրբ հոգու միաբանություն» (CEPAC) կազմակերպությունը ներկայացրեց իր առաքելությունը թիրախ խմբի հետ աշխատանքում և մատուցվող ծառայությունները

7.7 Հանդիպել ենք «Կարիտաս Իտալիա»-ի ներկայացուցիչների, միգրացիոն ոլորտի փորձագետների, ինչպես նաև Իտալիայի ներքին գործերի նախարարության ներկայացուցիչների հետ: ՆԳՆ աշխատակիցները ներկայացրեցին Իտալիայի միգրացիոն գործընթացների ընդհանուր պատկերը, խոսեցին կանոնավոր և անկանոն միգրացիայից, ինչպես նաև ապաստան հայցողների և փախստականների ընդունման և ինտեգրման բնագավառներում կառավարության և հասարակական կազմակերպությունների համագործակցության մեխանիզմներից:

7.8 Հանդիպել ենք Իտալիայի՝ փախստականների ընդունման ազգային գործակալության, ինչպես նաև «Կարիտաս Հռոմ»-ի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում նեկայացվեց փախստականների, ապաստան հայցողների, անչափահաս օտարերկրացիների և այլ խոցելի միգրանտների «Ընդունման և ինտեգրման համակարգ»-ը (SAI), որը հիմնադրվել է 2020 թվականին: SAI-ն գործում է Ներքին գործերի նախարարության համակարգմամբ և իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքապետարանների, ոչ կառավարական և կամավորական կազմակերպությունների ապակենտրոնացված ցանցի միջոցով: Դրա

հիմնական նպատակն է խթանել պաշտպանություն ստացած անձանց ինքնավարությունը և սոցիալական ինտեգրումը:

Այցելեցինք նաև փախստականների ընդունման կենտրոն, ծանոթացանք կենտրոնի կառուցվածքին, ինչպես նաև ինտեգրման ոլորտում փախստականների հետ տարվող աշխատանքներին:

7.9 Հանդիպել ենք Իտալիայի աշխատանքի նախարարության աշխատակիցներին: Ներկայացվեցին առանց ուղեկցողի անչափահասների ընդունման և ինտեգրման մեխանիզմները, ինչպես նաև փախստականների և միգրանտների աշխատանքային ինտեգրացիայի ոլորտում նախարարության կողմից իրականացվող աշխատանքները:

7.10 Հանդիպել ենք նաև «Կարիտաս Ինտերնեյշնլս»-ի ներկայացուցիչների հետ: «Կարիտաս Ինտերնեյշնլիս»-ը համատեղում է մարդասիրական ճգնաժամերի դեպքում անհապաղ օգնությունը երկարաժամկետ զարգացման ջանքերի հետ՝ սկսած միգրացիայի և փախստականների աջակցությունից մինչև առողջապահության, կրթության և տնտեսական արդարադատության ծրագրեր:

7.11 Հաջորդ հանդիպումը ՄԱԿ ՓԳՀ-ի Իտալիայի գրասենյակի ներկայացուցիչների հետ էր, ովքեր ներկայացրեցին ապաստան հայցողների և փախստականների ընդունման և ինտեգրման ոլորտում իրենց գրասենյակի կողմից իրականացվող ծրագրերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Չկան:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Որպես արդյունք արձանագրվել է ապաստան հայցող և փախստական ճանաչված անձանց, նաև աշխատանքային միգրանտներին մատուցվող ինտեգրված ծառայությունների և Հայաստանի Հանրապետությունում մատուցվող ինտեգրված ծառայությունների տրամադրման համար որդեգրված միևնույն սկզբունքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մատուցվող ինտեգրված ծառայությունների շարունակական կատարելագործումը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

19.11.2025թ.